

ԳՐԱԴՐՈՒԹՅԱՆ

«ԼԻԱԿԱՏԱՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒԻ

ՀԱՄԵՍԱՏՈՒԹԵԱՄԲ 562 ԼԵՁՈՒՆԵՐԻ»

Ն Ե Ր Ա Ն Ո Ւ Թ Ի Ն

ՀՐԱՋԵԱՅ ԱՆԱՌԻԵԱՆ — ԵՐԵՎԱՆ — 1955, էջ 655

Նոր պարսկերէնը սենի բազմաթիւ բարբառներ, որոնք կը բաժնուին երեք խումբերու:

ա) Կեդրոնական բարբառներ, որոնց զխաւորն է փարսին կամ կրակապաշտ պարսիկներու բարբառը: Փարսինները ըլլալով իսկական պարսիկներու ներկայացուցիչները, լեզուով ալ շատ անաղարտ մնացած են: Մինչդեռ բուն պարսկերէնը, մանձնտական կրօնքի պատճառով, խճողուած է անհամար արաբերէն բառերով, փարսին զրադաշտական կրօնքի շնորհիւ, բոլորովին զերծ մնացած է այդ աւելորդ խառնուրդէն: Փարսինը ցրուած են Հարաւային Պարսկաստանի մէջ, բայց անոնց զխաւոր քաղաքն է Եզտ քաղաքը: Հնդկաստան՝ Պոմպէյ ալ շատ փարսեր կան, բայց անոնք Գուճարաթի կը խօսին:

Ստորե կը ներկայացնենք ամբողջական մատենագրութիւն մը իրանեան ճիւղի մասին, ինչ որ Աճառեան կը կատարէ մասնակի կերպով:

1) Ընդհանրապէս իրանեան ճիւղի մասին՝ Geiger & Kuhn, Grundriss der Iranischen Philologie, 2 հատոր, Strasburg, 1895 - 1901 (աւելուածով մը Օսիթի)րէնի մասին, 1903); H. Reichelt, Iranisch (Geschichte der idg. Sprachwiss. IV. 2), Berlin, 1927; H. W. Bailey, Պարսիկներ (բարբառներ) յօդուածը՝ Encyclopédie de l'Islamի մէջ:

2) Հին պարսկերէնի մասին՝ Meillet-Benveniste, grammaire du vieux - perse, Paris, 1931; Herzfeld, Altpersische Inschriften, Berlin, 1938; R. G. Kent, Old Persian Grammar, Texts, Lexicon, New Haven, 1950; W. Hinz, Altpersischer Wortschatz, Leipzig, 1942:

3) Պահլավերէնի և միջին պարսկերէնի

մասին՝ P. Tedesco, Dialektologie der Westiranischen Turfantexte (Le Monde Oriental, XV, էջ 184 - 258); H. S. Nyberg, Hilfsbuch zum Pehlevi, 2 հատոր, Leipzig, 1928 - 1931; W. Henning, Das Verbum des Mittel persischen der Turfanfragmente (Zeitschrift für Indologie und Iranistik, IX, 1933, էջ 158 - 253); O. Hansen, Die mittelpersischen Papyri, Berlin, 1938, (Abhandl. Berl. Akad. 1937):

4) Պարթևերէնի մասին՝ A. Ghilain, Essai sur la langue parthe, Louvain, 1939:

5) Պարսկերէնի մասին՝ P. Horn, Neupersische Schriftsprache (Grund. iran. Philologieի մէջ); H. Jensen, Neupersische Grammatik, Heidelberg, 1931; Lambton, Three Persian dialects, London, 1938:

բ) Կասպեան բարբառներ, որոնք կը խօսուին Կասպից ծովի հարաւային և արևմտեան եզերքները, որոնց զխաւորներն են, արեւելքէն դէպի արևմուտք ուղղուելով, մազանիստանի, սեմևանի, ֆիլախի, քալիւի (91000) և քարեհեց (125000) բարբառները: Վերջինը կը խօսուի Շամախի շրջանին մէջ: Կան մինչև իսկ թաթարախոսներ, որոնք կը բնակին Շամախի Մատրասա, Ղուբայի Խաչմաս և Քիլիվար, Ղլլարի Բեքիթէյ կամ Ղարաշալի գիւղերը:

1) Կասպերէնի մասին՝ A. Christensen, Contribution à la dialectologie iranienne, Copenhagen, 1930:

գ) Բալխի բարբառներ, որոնք կը կազմեն իրանեան լեզուներու հրախոս արեւելեան ճիւղը և սահմանակից են մէկ կողմէն թուրքերէնին և միւս կողմէն հնդկերէնին: Այս բարբառները կը տարբերին տաճիկներու բարբառէն (այր թուրքիստանի բնիկ իրանցիներուն բարբառն է) և ասով ցոյց կու տան թէ, Բամիլի շրջանի այս պարսիկները բուն իրանցի պարսիկներն են, որոնք փարսիւով արարական արշաւանքէն, օգտատանած են այս լեռները: Անոնք աւելի երկար պահած են բնիկ զրադաշտական կրօնքը (այրու հետքերը մինչև այսօր ալ կը մնան իրենց մէջ) և աւելի ուշ մանձնտական դարձած են: Այս խաւոր բարբառներն են՝ սարիխուլի, Երվանի, վիսի, իելլաւի, գիբակի, մինչակի, ճիլգահի, խովար, Բուլայի, Բուսանի, սակըլիչի:

1) Բամիրեան բարբառներու մասին՝ W. Lentz, Pamir - Dialekte, Göttingen, 1933; H. Sköld, Materialien zu den iranischen Pamirsprachen, Lund, 1936; G. Morgenstierne, Indo

-iranian Frontier Languages, Չ Կատոր, Oslo, 1929-1938:

2) Զեմսերեմ, որ աւանդուած է մեզի Ավեստայի մէջ. (չբաղաճտական կրօնքի սուրբ գիրքը, որ կը վիրապրուի Զրադաշտին): Թէ մ'ըր կը խօսուէր այս լեզուն և թէ ինչ հնութիւն ունի Ավեստան՝ յայտնի չէ: Ներկայ բարբառներէն ոչ մէկը կապ ունի իրեն հետ, որով անոր բնակավայրը անծածօթ կը մնայ, բայց միևնոյն ժամանակ կարելի է հետեցնել այս իրողութիւնէն, որ զենտերէնը ընդարձակ տարածութեան վրայ չէր խօսուեր: Երջան մը գիտունները զենտերէնը կը համարէին մարիբու լեզուն, ուստի խօսուած Մարաստանի մէջ, որուն համաձայն կը թուի այն աւանդութիւնը, թէ Զրադաշտը ուրիցի է: Ապա կարծեցիկն թէ Արաքսիոյ լեզուն է. (Պարթևաստանէն զէպի արեւելք, Բամիբի և Հինաստրոնջի միջև), ըստ այսմ զայն կը կոչէին շին պակսիբերեմ: Բայց այժմ գիտունները այս կարծիքն ալ կը մերժեն և աւելի ևս կը գորանայ այն տեսակէտը, թէ Ավեստայի լեզուն կը պատկանի Պարսկաստանի հիւսիս արեւելեան շրջանին: Ավեստան բազկացած է երկու մասերէ: Հնագոյնն են Gāthāները, որոնք լեզուն իր հնութեամբ ետ չի մնար Վէտաներէն և երբեմն նոյնիսկ կը գերազանցէ զանոնք. երկրորդ՝ ամբողջ մնացեալ մասը որ աւելի նոր լեզունով է և ինչպէս կ'երևի, հեղինակներու գործածական լեզուն չէր, այլ ուսումնական լեզու մը, ինչպէս գրաբարը մեր նոր գրականութեան շրջանին: Ավեստան նախապէս գրուած է արափական աղբառ այբուբենով, յետոյ աւանդական սխալ արտասանութեան համաձայն, տառադարձուած է զենտերէն այբուբենով: Մեզի կը մնայ միայն Ավեստայի մէկ մասը զենտական այս սխալ տառադարձութեամբ և հետեւաբար ճիշդ գաղափար մը չի տար հին զենտերէն լեզուի մասին: Զենտերէնէն մեզի աւանդուած է 4000 բառ: Ավեստան գրուած պէտք է ըլլայ Ն. Ք. 7րդ. դարուն:

1) Ավեստայի մասին՝ Bartholomae, Altiranisches Wörterbuch, Strasburg, 1904 և Zum altiranischen Wörterbuch, (Indogermanische Forschungen, XIX, Beiheft, 1904); H. Reichelt, Awestisches Elementarbuch, Heidelberg, 1909; Benveniste, Les infinitifs avestiques, Paris, 1935; Morgenstierne, Norsk

Tidsskr. for Sprogvid. XII, (1949), էջ 30-82; Bailey, Zoroastrian Problems, Oxford, 1943:

3) Տանիկերեմ, Տանիկիտանի լեզուն է: Ունի զիգարունեստական, իմաստասիրական, պատմական և կրօնական ճառի գրականութիւն: Ժամանակակից արեւելագէտներէն ոմանք կը կարծեն թէ Տանիկիտանը Ավեստայի հայրենիքը եղած է և թէ տանիկերէնն ալ Ավեստայի լեզուի ժառանգն է: Լոկ կարծիք մըն է ստիկա, որ լեզուական տուեալներով չ'ապացուցուիր: Իրականին մէջ, տանիկերէնը և պարսկերէնը այնքան մօտ են իրարու, որ պէտք է հիթազրիլ որ անոնք երկուքն ալ աւելի հին լեզուի մը տարբեր ժառանգներն են:

4) Անիլաներեմ, բնիկները կը կոչուին Pashto: Այս լեզունով կը խօսին չորս միլիոն հոգի, որոնք գլխաւորաբար կը բնակին Աֆղանիստանի մէջ. բայց Աֆղանիստանի ամբողջ ժողովուրդը աֆղաներէն չի խօսիր, այլ կը խօսի նաև ուրիշ իրանեան լեզուներ: Աֆղաներէնը կազմութեամբ աւելի մօտ է զենտերէնին և ոչ թէ հին պարսկերէնին, ինչ որ նոր պապացոյց մըն է այն մասին թէ զենտերէնը Մարաստանի լեզուն չէ: Գրականութիւնը սկսած է 16րդ. դարէն և բաւական ծաղկած է: Այժմ շատ հարուստ է ժողովրդական գրականութեամբ:

1) Աֆղաներէնի մասին՝ G. Morgenstierne, Report on a Linguistic Mission to Afghanistan, Oslo, 1926 և An Etymological Vocabulary of Pashto, Oslo, 1927; W. Lentz, Z. D. M. G. (1937), էջ 711-732 և 95, 1 (1941), էջ 117-123:

5) Պելուներեմ, կը խօսուի Աֆղանիստանի և Հնդկաստանի միջև, մինչև Ինդոս գետը: Բայց պելուներիսը ցրուած են նաև հիւսիսէն՝ մինչև հնորասան և հարաւէն՝ մինչև Արաքսական ծով: Այս լեզուն նման է Պարսկաստանի հիւսիս արևմտեան բարբառներուն և փոխադրուած է այդ շրջանէն:

1) Պելուներէնի մասին՝ W. Geiger, Etymologie des Baluci և Lautlehre des Baluci, München, 1891; G. Morgenstierne, Norsk Tidsskr. for Sprogvidi, մէջ, V. 1932:

6) Քիււսերեմ, կը խօսուի Եփրատի եզերքէն և Ասորիքէն մինչև Քիւրմանշահ, հնորասան և Աֆղանիստան, և Միջագետքէն մինչև

չև նոր - Պայազլուտ Անոնց կենդրոնազայրը
 Զալրուտ լեռներու շրջանն է: Քիւրտերը հին
 ցեղ են, ապահովաբար նոյնն են Քսենոփոնի
 Καρδογχοί, ասորիներու qordo, հին հայոց
 Կործոյ կամ Կորզուացի կոչուած ցեղին հետ:
 Անոնք բաժնուած են բազմաթիւ աշխրէթ-
 ներու, որոնք շատ անգամ իրարու հետ
 թշնամական յարաբերութիւն ունին: Անոնց
 ամենախիտ բնակութիւնն է Աղեղէն մինչև
 Ուրմիա, Մակու և Քիրմանշահ: Քիւրտե-
 րէնը շատ մօտ է նոր պարսկերէնին և ունի
 բազմաթիւ բարբառներ: Բարբառներու տար-
 բերութիւնը աւելի կը շեշտուի անո՞վ որ,
 գեռ չունին ազգային միութիւն, գրական-
 նութիւն և ընդհանուր գրական լեզու: Մա-
 նօթ բարբառներէն գլխաւորներն են՝ Կուր-
 մանցի՝ որ բուն քիւրտերէնն է. Ջազա, Իմլի,
 Քիրմանցահի: Քիւրտերու մէկ առանձին
 ճիւղը կը կազմեն Տերսիսիցիները, որոնք
 մահաւատական չեն և կը խօսին զազայերէնի
 մէկ տեսակը: Բոլորովին առանձին են նաև
 Արիսիները, որոնք բաժնուած են երկու
 հատուածներու. մէկ մասը կը բնակի Մու-
 սուլի շրջանը, իսկ միւսը՝ Արագածի լան-
 ջերուն: Անոնք ունին առանձին կրօնք, որ
 յայտայտի չէ: Կը խօսին քիւրտերէն,
 իսկ վերջին տարիները արտաբն ստեղծե-
 լով, սկսան մշակել իրենց լեզուն:

1) Քիւրտերէնի մասին՝ K. Barr, Kur-
 dische Dialekte, Iranische Dialektaufzei-
 chnungen aus dem Nachlass von T. C. An-
 dreasi մէջ (Abhand. Geselsch. Wiss. zu
 Göttingen III, 11), Berlin, 1939:

7) Օսլերքերէն (224000), կը խօսուի Մի-
 ջին Կովկասի լեռներէն մինչև Թիւրքի մօ-
 տերը: Դիտաւնները կը հաստատեն թէ սեթ-
 ները հին սկիւթացիներն են, որոնք սար-
 մանտացիներու և ուրիշ իրանական ժողո-
 վուրդներու հետ կը բնակէին հնագոյն ժա-
 մանակ ամբողջ Հարաւային Ռուսաստանի
 շրջանները, ապա սլաւոնները զիրենք քշե-
 ցին այդ շրջանէն: Նոյնիսկ Օսեթ բառը կը
 ծագի Սկիւթիա ձևէն: Հին պատմագիրները
 շատ բան աւանդած են մեզի այս ժողո-
 վուրդի մասին: Բացի զանազան յատուկ
 առուներէն, Հերոդոտը կու տայ մեզի մի
 քանի սկիւթական և սարմատական բառեր,
 որոնք բոլորը կը բացատրուին իրանեան ար-
 մատներով և յատկապէս սեթերէնով: Որինակ՝
 սկիւթական - furtas, որ կը գտնենք յոյն

պատմիչներու աւանդած սկիւթական յա-
 տուկ անուններու մէջ, ճիշդ ու ճիշդ նոյն
 է ou. furt արդիո՞ր բառի հետ: Օսեթերը կը
 մտտենայ մէկ կողմէն սոկտերէնին և միւս
 կողմէն Ետզիսպի բարբառին, որ կը խօսուի
 այժմ Սամարղանտի արեւելեան կողմը:

1) Օսլերքերէնի մասին՝ V. Miller, Die
 Sprache der Osseten, 1904 (Grund. Iran.
 Philologieի մէջ); Baiev և Lentz, Mitteil.
 der Semin. für Orient. Spr. XXXVII, 1934,
 էջ 161; Bailey, Trans. Phil. Soc., 1945, էջ
 1-38:

8) Սոկերէն, հին Պարսկաստանի Սոկ-
 տիանիա նահանգի լեզուն է. (մայրաքա-
 ղաքն է Maracanda, արդի Սամարղանտ),
 որ կորսուած էր մինչև վերջին ժամանակ-
 ները: 1900-10 թուականներուն երևան
 եկու շինական Թուրքիստանի՝ քանի մը
 բնագիրներու մէջ, մէկ մասը քրիստոնէա-
 կան և մեծ մասը պուտտայական նիւթերու
 վերաբերեալ, որոնց թուականն է առաջին
 դարէն մինչև 9րդ. դար: Այս լեզուն ալ կը
 պատկանէր սկիւթական խումբին և մօտիկ
 աղջականն էր օսեթերէնին: Միջին դարերուն
 մեծ տարածութեան վրայ կը խօսուէր և
 ամբողջ Կեդրոնական Ասիոյ միջազգային
 լեզուն էր. սկիւթով Սոկտիանիայէն կը տա-
 րածուէր մինչև Մանշուրիա և Չինաստանի
 սիրտը, և հասու բաւական բարձր քաղա-
 քակրթութեան: Իր ներկայացուցիչն է այ-
 սօր Ետզիսպի բարբառը:

1) Սոկերէնի մասին՝ Essai de gram-
 maire sogdienne I, R. Gauthiotի կողմէ, Pa-
 ris, 1914-1923; II, E. Benvenisteի կողմէ,
 Paris, 1923; W. Henning, Ein manichäisches
 Bet- und Beichtbuch (Abhand. Berl. Akad.),
 Berlin, 1937; E. Benveniste, Textes sogdiens
 de la Mission Pelliot, Paris, 1940; Henning,
 Bull. School Orient. Stud. XI, (1946) էջ 713
 և XII, (1948) էջ 601:

9) Սոկերէն, նոյնպէս երևան եկաւ Թուր-
 քանի պեղումներուն ժամանակ. բազմաթիւ
 բնագիրներով, զոր աւանդած են Ոսթանի
 պուտտայականները: Յաճախ այս լեզուն
 անորոշ բառով կը կոչենա Արեւելեան իրանե-
 րէնա և մօտիկ է սոկտերէնին:

10) Մարերէն, Մարաստանի լեզուն է:
 Մարաստանը կը տարածուէր Ուրմիոյ լիճէն
 արեւելք՝ մինչև արդի Պարսկաստանի կեդ-
 րունը, մայրաքաղաք ունենալով Էկպատանը:

որ ներկայ շամատանն է: Մարերու լեզուն յայտնի է մեզի, բայց ստոյգ է որ անոնք արիական ճիւղին կը պատկանէին: Ն. Ք. 549ին, Պարսիկները, որոնք Պարսից ծոցի եզերքը բնակող ժողովուրդ մըն էին, բարձրացան զէպի կիւսիս և Մարերու պետութեան վերջ տուին: Յեղակցութիւնը և անշուշտ լեզուի նմանութիւնը պատճառ դարձան, որ Մարերը շուտով ձուլուին Պարսիկներու մէջ և մարերէնը բոլորովին անհետացաւ:

Աճառեան չի յիշատակեր Խորազմերէնը կամ Խուարզմերէնը, Խորազմի կամ Խուարզմի բարբառը, որ մեզի ծանօթ է արաբական դատաստանական գաշնագրերու մէջ յիշատակուած կարգ մը մեկնութիւններով և նախագատութիւններով: Արաբական գիրերու արտագրումէն դատելով, կարելի է ենթադրել թէ Խորազմերէնը գրացի է Սոկոտերէնին:

Ուրիշ բարբառ մը, որուն տակաւին ո՛չ անունը և ո՛չ տառերը որոշապէս կաստատուած են, երեան եկաւ Հեֆթալեան կամ աջիկի - Սիլիթեան թագաւորներու (Գուցանա, Ք. Վ. 2րդ. 3րդ. դարուն դարերուն) գրաձեռնու առասպելներով և կարգ մը տակաւին չկարդացուած ձեռագրական բեկորներով: Այսօրեան կը գրուի ձախէն աջ և կը ծագի յունական այբուբենէն: (Տես, A. Meillet & M. cohen, L. M., էջ 30:

1) Խոթաներէնի մասին՝ H. W. Bailey, Codices Khotanenses, Copenhagen, 1938 & Khotanese Texts, I, Cambridge, 1945; S. Konow, Primer of Khotanese Saka, Norsk Tidsskr. for Sprogvid., XV, 1949; էջ 1-136:

2) Խորազմերէնի մասին՝ W. Henning, Zeitschrift der deutschen Morgenland, Gesellschaft., 1936, յաւելուած էջ 30-34:

3) H. Junker, Drei Erzählungen aus Yagnōbi, Heidelberg, 1914 & Arische Forschungen Yagnōbi - Studien, Leipzig, 1930: O. Hansen, Essai de déchiffrement, La Nouvelle Clivio մէջ, III, էջ 41-69: Տես A. Meillet & Marcel Cohen, L. M., էջ 70-71:

Գ. — Թոխարական ճիւղը. — Այս ճիւղը մինչև վերջին ժամանակները անծանօթ էր: 1892էն մինչև 1910 Զինական Թուրքիստանի և Թուրքանի շրջաններուն մէջ գիտական խուզարկութիւններ կատարուելով, երևան եկան քանի մը անծանօթ լեզուներ զանա-

զան ձեռագրիներու մէջ: Անոնց մէջ կային նաև A և B երկու իրարու շատ մօտիկ բարբառներ, հրկուքն ալ հնդկարական միևնոյն մօր պառակ, որոնք խօսուած էին Քուչա, Կարշար և Թուրքան գաւառներու շրջանները, այսինքն կին Պակարիոյ մէջ, Կիտունները համաձայնեցան A և B լեզուները կոչել թոխարեան, Bն մանաւանդ անուանելով Բուչերեան: Այս անունը նախ գտնուեցաւ չինական մատենագրութեան մէջ Tu-ho-lo ձևով և հնդիկ մատենագրութեան մէջ Tukhāra ձևով: Այս ձևերու հետ նոյնն են Ստրաբոնի Ύόχαροι և Խորենացիի Ալխարհագրութեան մէջ յիշուած Թուխարի ժողովուրդը՝ Թուրքիստանի և Սոկոտանիոյ կողմերը: Վերջապէս նոր գտնուած բնագրիներու մէկու թուրքերէն թարգմանութեան մէջ յիշուած է Tokri ձևը:

Թոխարերէն ձեռագրիները բարբառաբար գրուած էին հնդկական այբուբենով, որոնց կցուած էր միևնոյն ժամանակ հնդկերէն թարգմանութիւնը: Այսպէսով, գիտունները կրցան դիտուել կարգաւ և լուծել այս անծանօթ լեզուն և ճշգիւ անոր դիրքը հնդկարական լեզուախումբին մէջ: Թոխարերէնը շատ հին վրձնակ մը կը ներկայացնէ: Իր բառամթերքով ան կը գտնուի պալիկի-սլաւական և յոյն-հայ ճիւղերու միջև, բոլորովին հետև արիական խումբին:

Քուչերէնը կը խօսուէր Քուչայի մէջ մինչև 7րդ. դար, իսկ A բարբառը տեւած է մինչև 10րդ. դար: Տես A. Meillet, Le tokharien, Indogerm. Jahrb. I, մէջ 1914; E. Sieg, W. Siegling - W. Schulze, Tocharische Grammatik, Göttingen, 1931; S. Levi, Fragments de textes koutchéens, Paris, 1933; E. Schwentner, Tocharisch, Berlin, 1935; E. Benveniste, Tokharien et indo-européen, (Festschrift H. Hirt, II, մէջ, 1936, էջ 227-240); H. W. Bailey, Ttagara (Bull. of the School of Orient. Studies, VIII, մէջ, էջ 883); W. Henning, Argi and the Tokharians (Նոյնը IX, 1938, էջ 545; E. Schwentner, Z. D. M. G. N. F. XVIII, մէջ, 1939, էջ 76); H. Pedersen, Tocharisch, Copenhagen, 1941; Henning, Asia Major, I, (1949), էջ 158-162: Տես A. Meillet & Marcel Cohen, L. M., էջ 72:

ԱՆՈՒՇՄԱՆ ՎՐԴ. ԶԳԱՆԵՆՆ (Շարունակելի՛ր՝ 8)